



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»



Մ. Մինասյան
Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

«06» 02 2017 թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 06

Ձեռնարկողը՝

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ

Ք. Երևան, Շենգավիթ, Շիրակի 74/16

Գործունեությունը՝

**Ոսկեհարի բազալտի հանքավայրի շահագործման
շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկրկություն**

«Արագածուրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 06

«06» 02 2017թ.

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատի բազալտի հանքավայրի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

Ձեռնարկող՝

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱԳ

հաշվետվություն. /Ա կատեգորիա/

Նախագծող՝

Վ. Մազլումյան

ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատի բազալտի հանքավայրը գտնվում է նույնանուն գյուղից 1.5-2կմ հյուսիս-արևմուտք և Աշտարակ քաղաքից 10կմ հարավ: Երևան քաղաքի հետ հանքավայրը կապված է 27-28կմ երկարությամբ ասֆալտապատ և գրունտային ճանապարհներով: Մոտակա բնակավայրերն են՝ Ոսկեհատ, Ոսկեվազ, Ագարակ և Օշական գյուղերը: Շրջանն ապահովված է էլեկտրաէներգիայով: Տնտեսական առումով այստեղ զարգացած են արդյունաբերական ու գյուղատնտեսական ճյուղերը:

Կլիման չորային է, մայրցամաքային: Տարեկան տեղումների միջին քանակը կազմում է 550-600մմ, իսկ ջերմաստիճանը տատանվում է +12°-ից +15°C:


Շրջանն ունի շինարարական քարի, հրաբխային շլակների, պեմզայի մեծ քանակի պաշարներ: Հանքավայրի շրջանն իրենից ներկայացնում է Արագածի նախալեռնային մաս՝ իր հարթավայրա-բլրային ռելիեֆով և խորը հեղեղատներով:

Շրջանի հիմնական ջրային երակներն են Քասախ, Ամբերդ և Շախվերդ գետերը:

Հանքավայրը տեղակայված է 1050-1200մ բացարձակ բարձրությունների վրա:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին չորրորդականի պիրոկլաստիկ տուֆեր, վերին չորրորդական ժամանակաշրջանի բազալտներ, ալյուվիալ-դելյուվիալ և պրոլյուվիալ նստվածքներ: Բազալտները խարամացված են, ծակոտկեն, ճաքճքված, մուգ մոխրագույնից մինչև սև երանգի: Ավելի թարմ, խիտ և մանր-ծակոտկեն

Արագածոտնի մարզի Ոսկեհատի բազալտի հանքավայրի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ



ճաքճքված բազալտները համասեռ կառուցվածք ունեն, մոխրագույն են և տեղակայված հանքավայրի հարավային մասում: Ճաքերի տարաբնույթ համակարգը ապարներին բաժանել է եռանկյունաձև, ուղղանկյունաձև և զուգահեռանիստաձև առանձին բլոկների: Ճաքերը լցված են կարբոնատներով, առանձին մասերում կավաավազային նյութերով: Ապարների միաձուլությունը այն հիմնական ցուցանիշներից է, որը հատկապես կարևոր նշանակություն ունի երեսապատման քարերի հանքավայրի շահագործման համար, կանխորոշում է դրանց յուրացման արդյունավետությունը և պայմանավորված է ապարների ճեղքավորվածությամբ:

Ոսկեհատի հանքավայրի բազալտի ճաքերը բաժանվում են ճիշտ երկրաչափական պատկերներով փոքր բլոկների, հիմնականում ուղղանկյունաձև բլոկների: Վերջիններս բնութագրվում են կայուն որակական ցուցանիշներով և համապատասխանում 9479-69 ԳՈՍ-ի(պիտանի են երեսապատման քարի արտադրության համար), PTY 100-62, ՀԽՍՍ ՀՍ-ի տեխնիկական պահանջներին, կարող են օգտագործվել բլոկների ու շինարարական քարի արդյունահանման համար:

Հանքավայրի բազալտի պաշարները հաստատվել են ՀԽՍՍ խորհրդի Երկրաբանական վարչության ՊՏՀ կողմից, 01.01.1972թ. թիվ 207 արձանագրությամբ՝ հեղինակների կողմից առաջարկվող կարգերով և քանակով. A-300.3հազար մ³, B-757.8հազար մ³ և C-2044.5հազար մ³: Բլոկների միջին ելքը՝ 20.8%:

Երկրաբանահետախուզական աշխատանքներին զուգընթաց կատարված հիդրոերկրաբանական դիտարկումներով պարզվել է ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հորատանցքերում, որը բացատրվում է հանքավայրը կազմող բազալտների, ինչպես նաև դրանց հիմնատակվող հրաբխային խարամների խիստ ջրաթափանցելիությամբ: Հանքավայրի շրջանում բնական աղբյուրներ չկան:

Մակաբացման ապարների ոչ մեծ հզորությունը, տեղանքի ռելիեֆը և տեղամասի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները թույլ են տալիս հանքավայրի շահագործումն իրականացնել բաց եղանակով, առանց հորատապայթեցման աշխատանքների:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- բացահանքի մշակման խորությունը՝ մինչև 985.0մ բարձրության հորիզոն,
- ամենամեծ երկարությունը՝ 689մ,
- ամենամեծ լայնությունը՝ 382մ,
- օգտակար հանածոյի ամենամեծ խորությունը՝ 22.8մ,
- օտարման տարածքը՝ 17.39հա,
- կորզվող պաշարների քանակը՝ 2618.5 հազար մ³,
- մակաբացման ապարների քանակը՝ 396.5 հազար մ³,
- հաշվեկշռային պաշարների քանակը՝ 2850000մ³:

Հանքավայրի շահագործման ժամկետն է 50 տարի: Իսկ տարեկան արտադրողականությունը՝ 57000մ³ մարվող պաշար:

Բացահանքում լեռնակապիտալ աշխատանքներն իրականացվելու են շահագործման շինարարական շրջանում, բացահանքի հարավ-արևմտյան մասի գոյություն ունեցող



գրունտային ավտոճանապարհից ավտոճանապարհի անցումով՝ դեպի բացահանքի բացման առաջին 1037.5մ հորիզոն: Հաջորդ հորիզոնները մշակվելու են այդ ավտոճանապարհից, աստիճանաբար փոփոխելով երկարությունը՝ համապատասխան թեքություններով: Իսկ 987.50մ-985.00մ բարձրության հորիզոնները կմշակվեն բացահանքի արևելյան մասից նախատեսվող կտրող խրամով:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են. հանքաստիճանի բարձրություն՝ 2.5մ, անվտանգության բերմայի լայնություն՝ 1.0մ, աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյուն՝ 90°, աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնություն՝ 18-20մ:

Բացահանքը շահագործելիս առաջանում են կողերի բնամասերում և հատակում մնացող կորուստներ, որոնց ընդհանուր ծավալը լինելու է 231500մ³:

Հանույթը կատարվելու է հորատասեպային եղանակով, բլոկների բարձումը՝ ավտոկռունկի միջոցով: Մակաբացման ապարները և բազալտները նախատեսվում է հեռացնել բուլդոզերով: Բլոկների կոպիտ մշակումը նախատեսված է կատարել մեխանիկական եղանակով՝ հարվածապոկիչ մուրճերի միջոցով:

Մակաբացման ապարները, որոնց միջին հզորությունը կազմում է 2.28մ, իրենից ներկայացնում է հողաբուսական շերտ և ճեղքավորված բազալտների հետ խառը ավազակավեր: Մակաբացման ապարները կտեղափոխվեն N1 լցակույտ, իսկ հողմնահարված բազալտները՝ N2 լցակույտ: Հետագայում յուրաքանչյուր հորիզոնի շահագործման ավարտից հետո մակաբացման ապարները ներքին լցակույտերի ձևով կտեղափոխվի բացահանքի վրա: Շահագործման ընթացքում արտադրական թափոնները կտեղափոխվեն ՋՏԿ՝ բետոնի ստացման համար վերամշակման:

Քարհանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է հորատման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով, որը կբերվի KO-002 մակնիշի ջրցան-լվացող մեքենայով, իսկ խմելու համար անհրաժեշտ ջուրը՝ ջրի ցիստեռնով: Փոշենստեցման ընդհանուր մակերեսը կազմում է 9200մ², որի համար կպահանջվի 4600լ ջուր (ջրի տեսակարար ծախսն ընդունելով 0.5լ/ մ²):

Տարածք թափվող անձրևաջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Տարվա մեջ աշխատանքային օրերի քանակը կազմելու է 260օր, մեկ հերթափոխ, որի տևողությունը կլինի 8 ժամ:

Հանքավայրի տարածքում բացակայում են բուսականությունը, գետային ցանցերը, շինարարական կառույցներն ու հուշարձանները:

Շրջակա միջավայրի պահպանության նպատակով, վնասակար ազդեցությունները նվազեցնելու համար նախատեսված են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- սարքավորումները թույլատրել աշխատանքի միայն դրանց արտանետման գազերում վնասակար նյութերի թույլատրելի պարունակություն ապահովելու դեպքում, որի համար որոշ մեքենաների վրա դրվում են զտիչ սարքեր,
- փոշեառաջացման վերացման համար կիրականացվի աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին,



- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում թփուտներով,
- նավթամթերքները պահվում են բացահանքի արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում(բացօդյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն՝ ապահովելով թափված նավթամթերքների հոսքը դեպի հավաքող բետոնապատված փոսը,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալներն ու մասերը կհավաքվեն հատկացված առանձին տեղում և կհանձնվեն որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:

Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերականգնումը կկատարվի բացահանքում աշխատանքների ավարտից հետո, որի ընթացքում կիրականացվի նշված տարածքների մակերեսների հարթեցում (14.9հա): Այդ նպատակով անհրաժեշտ ծախսերի չափը հաշվվել է 1203.7 հազար դրամ:

Ամփոփելով վերոշարադրյալը, նախատեսված մի շարք բնապահպանական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա նվազեցնելու կամ մեղմելու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև վերահսկելու նախատեսվող աշխատանքների գործընթացը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ (կազմվել են նաև վերջիններիս արձանագրությունները), որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԼ Մայնինգ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատի բազալտի հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝



[Handwritten signature in blue ink]

Ն. Ռոստոմյան